



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՕՇՈՒՄ ՀՈԼԻՎՈՒՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

Կիրակի, 17 Հոկտեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ, սրբապատկերներու օծում պիտի կատարէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէջ:

Ս. Խորանին պիտի սպասարկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիլ՝ Արք. S. Վիգեն Աւ. Ջին. Վասիլեան:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY AND CONSECRATE ICONS AT ST. GARABED CHURCH

On Sunday, October 17th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood and deliver the sermon.

During the service, the Prelate will consecrate icons.

Parish Pastor Archpriest Fr. Vicken Vassilian will assist at the altar.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՏ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԴԵՍՊԱՆ ՄԱՐԻ ԵԽՎԱՆՈՎԻՉ ԱՅՑԵԼԵՑ ԱՇԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎ

Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Մարի Եռվանովիչ Չորեցաբթի, 13 Հոկտեմբերի յետմիջօրէին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ժողովականութեան ներկայացուցիչներու կողմէ:

Յարգելի դիւանագետը Ազգ. Առաջնորդարան ժամանեց ժամը 1:30ին, ընկերակցութեամբ իր օգևականներէն Սիւզըն Ջրիսթիի եւ ճեֆ Բարեջանի: Ան Առաջնորդ Սրբազնին հետ ունեցաւ կարճատեւ հանդիպում մը:

Այսուհետեւ, Առաջնորդ Սրբազնն ու հիւրերը ուղղուեցան «Տիգրան Եւ Զարուհի Տէր Դազարեան» սրահը, ուր համախմբուած էին Ազգ. Առաջնորդարանի մեծ ընտանիքին ներկայացուցիչները: Ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Վահե Եագուպեան, Կրօնական ժողովի, Ազգային Վարչութեան, Ազգային Վարժարաններու ևնամակալ Մարմինի, Եկեղեցիներու հոգաբարձութեանց ներկայացուցիչները, Ազգ. Վարժարաններու տնօրեններ, Տիկնաց Օժանդակ Մարմինի անդամներ, Յանձնախումբերու ներկայացուցիչներ եւ բարերարներ ու բարեկամներ: Տիկնաց Օժանդակ Մարմինը պատրաստած էր կոկիկ հիւրասիրութիւն մը:

Առաջնորդ



Սրբազնը ողջունեց Մարի Եռվանովիչը, յիշեցնելով, որ աւելի քան տարի մը առաջ դարձեալ Եղած էր ազգային այս հաստատութեան հիւրը: Ան վեր առաւ դեսպանին ծառայական առաքելութիւնը եւ նշեց, թէ հայութիւնը օրը օրին կը հետեւի Հայաստանի ու

Արցախի

իրադարձութիւններուն,

ակնկալութիւններ ունի մասաւանդ Ցեղասպանութեան ճանաչման գծով:

Ողջոյնի խօսք արտասանեց նաեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Վահե Եագուպեան: Ան գոհունակութիւն յայտնեց, որ դեսպան Եռվանովիչ կը հիւրընկալուի Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ, զոր ինք կը նկատէ իր երկրորդ տունը, մասաւանդ, որ այլապէս յաճախ անոր կը հանդիպի Հայաստանի մէջ: Ան անդրադարձաւ հայութեան ակնկալութիւններուն եւ աւելցուց, որ դեսպանին դիմաց որուած կաշկանդումները հասկնալի են, սակայն նաեւ յուսալի է, որ երբ ան աւելի բարձր պաշտօններու հասնի, մնայ հայութեան բարեկամն ու գործի ուղեկիցը:

Այսուհետեւ խօսք առաւ դեսպան Եռվանովիչ: Ան առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալումին համար, նշելով, որ հակառակ աշխատանքի ժամ ըլլալուն, բազմաթիւ ներկաներ կը հիւրընկալեն զինք Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ: Այսուհետեւ, ան ըստ բաւականին մանրամասն տեղեկութիւններով անդրադարձաւ Հայաստանի տնտեսական, քաղաքական իրադրութեանց եւ բարգաւաճման ընթացքին, այդ բոլորին մէջ ամերիկեան կառավարութեան աջակցութեան ու ակնկալութիւններուն, այն իմաստով, որ Հայաստանի մէջ ժողովրդավարութիւնը գտնէ ամբողջական կիրարկում, մարդկային իրաւունքներու յարգումն ու երկրի ապահովութիւնը բարելաւում ապրին: Ան յայտնեց, թէ Լու Անձելը ժամանած է ամերիկեան այլ քաղաքներ այցելութենէ ետք, հաղորդակից դարձած է հայութեան մտահոգութիւններուն ու մտասեւեռումներուն:

Ամերիկացի դիւանագետը ընդիանուր ակնարկ մը նետեց Հայաստանի տրամադրուած ամերիկեան օժանդակութիւններուն, սկսելով երկրաշարժի

տարիեւ մինչեւ յետ-անկախութեան շրջանը: Ան յայտնեց, որ ամերիկեան աշակցութեան նպատակներուն շարքին է Հայաստանի մեջ գործի առիթներու ընդարձակումը, արտադրողականութեան բարելաւումը եւ արտածումներու քաշալերանքը: Ան վեր առաւ նաեւ Միացեալ Լահանգներու եւ ՆԱԹՕԻ հետ Հայաստանի ապահովական գործակցութեան աշխատանքները, նշեց, որ Ուաշինգթոն կը ցանկայ, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները բարելաւում ապրին ու գործակցութիւնը զարգանայ ի նպաստ երկու երկիրներուն, սահմանին երկու կողմերուն միջեւ շարժում ստեղծուի ու ատիկա յարաբերութեանց բարելաւման գործոս մը ուլայ:

Իր խօսքի վերջին բաժինով, դեսպան Եղվանովիչ անդրադարձաւ Արցախի հարցին ու Նորագոյն զարգացումներուն, ի շարս որոնց՝ զինադուլի խախտումի դեպքերուն. ան ըստ, որ միջնորդ կողմերը կ'աշխատին բանակցային ուղին յառաջ մղել եւ կողմերը ի մի բերել դեպի լուծում տանող ճամբուն մեջ:

Ներկաները առիթ ունեցան հարցումներ ուղղելու դեսպանին, որ մասրամասն լուսաբանութիւններ տուաւ զանազան հարցերու եւ աշխատակըներու մասին:

Հրաժեշտի պահուն, ներկաները ուսեցան միացեալ խմբանկար մը:

AMBASSADOR MARIE YOVANOVITCH VISITS THE PRELACY



On Wednesday,
October 13th, 2010, H.E.
Archbishop Moushegh
Mardirossian, Prelate,
welcomed to the Prelacy
Ambassador to Armenia H.E.
Marie Yovanovitch,
accompanied by aides Susan
Christy and Jeff Parechan.

Following a private meeting, the Prelate and Ambassador headed to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where

Prelacy representatives and friends had gathered. Among the attendees were Central Executive Council member Mr. Vahe Yacoubian, members of ARF Central Committee, Clergy, Executive Council, and Board of Regents, Parishes' Chairmen, Prelacy Schools' principals, Ladies Auxiliary members, sponsors, and friends. The guests were hosted to a reception organized by the Prelacy Ladies Auxiliary.

The Prelate welcomed Ambassador Yovanovitch, noting that this was her second visit to our home and the community in just over a year, and conveyed

the expectations of the Armenian people with regards to Armenia, Artsakh, and the Genocide.

Mr. Yacoubian also welcomed the Ambassador, whom he noted he has met with on prior occasions in Armenia. Like the Prelate, Mr. Yacoubian also spoke of the expectations the community has, and added that though the pressures she faces are understandable, he is hopeful that she remains a friend of the Armenian people with our best interests in mind no matter what position she holds.

Ambassador Yovanovitch was then invited to deliver her remarks. After expressing her thanks for the warm welcome and reception, Ambassador Yovanovitch spoke in great detail about the current economic and social climate of Armenia. She noted that prior to arriving in Los Angeles she visited a number of other Armenian communities and understands the concerns of the Armenian people, which she will convey to leaders in Washington in a few days.

Ambassador Yovanovitch also spoke of American aid to Armenia, from the days following the earthquake to the present, which serves primarily to create jobs and increase and encourage exports, and stimulate the economy. She also spoke highly about the ongoing partnership between the United States and NATO with regards to the safety of Armenia, stating that Washington would like to see normal relations and ties established between Armenia and Turkey and for cooperation to exist between the two for the benefit of both countries

A question and answer session followed.

ՁԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ 80ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինին եւ Ծնողական Յանձնախումբին, Թեմիս Կիրակնօրեայ Վարժարաններուն հիմնադրութեան 80րդ տարեդարձին առթիւ, ճաշկերոյթ տօնակատարութիւն մը տեղի պիտի ունենայ Ճաքար, 30 Յոկտեմբերին, Երեկոյեան ժամը 6-ին, Ենսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ «Աւտիսիստան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազնա Յօր հովանաւորութիւնը:

Մուտքի նուերն է \$40 տոլար, աշակերտներուն՝ \$20 տոլար:

Յաւելեալ տեղեկութիւններու համար, հեռաձայնել Ասի Ջեսսեանին, (818) 515-8067 թիւին եւ կամ ձեր շրջանի Եկեղեցւոյ գրասենեակը:

**PRELACY SUNDAY SCHOOLS 80TH ANNIVERSARY
CELEBRATION**

On Saturday, October 30th, the 80th anniversary of Prelacy Sunday Schools will be celebrated at "Avedessian" Hall of Holy Martyrs Church in Encino.

The celebration is being held under the auspices of the Prelate and has been organized by the Sunday Schools' Directorate & PTO.

Admission is \$40, and \$20 for Sunday School students.

To reserve tickets please contact Ani Keusseyan at 818-515-8067, or by contacting your local parish.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԾԵՅԻ ՍԱՍԻ ԺԸՄԱՅԵԼԻ Ի ՊԱՏԻ ԸՆԴՈՒԵԼՈՒԹԵԱՆ

Լիբանանեան խորհրդարանի անդամներեն ծեյիս Սամի Ժըմայելի Լու Ասճելըս այցելութեան առիթով, Լու Ասճելըսի մօս Լիբանանի հիւպատոս Շիկին Առև Ղազալ եւ Տոքթ. Ժողեֆ Ղազալ Ուրբաթ, 15 Յոկտեմբերի Երեկոյեան կազմակերպած են ընդունելութիւն մը:

Ընդառաջելով իրեն ուղղուած պաշտօնական հրաւերին, Առաջնորդ Սրբազնը ներկայ պիտի ըլլայ ընդունելութեան1

PRELATE TO ATTEND RECEPTION IN HONOR OF SHEIKH SAMY GEMAYEL

The Consul General of Lebanon the Honorable Mrs. Madonna Aoun Ghazal and Dr. Joseph Ghazal have organized a reception dinner in honor of Sheikh Samy Gemayel, MP, which will be held on the evening of Friday, October 15th.

The Prelate will attend the reception.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՍԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՉՆԵՐԸ

Երեքաբթի, 12 Յոկտեմբերի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Հայկական Ուկրածուծի Յիմնադրամի վարչութեան ներկայացուցիչներուն՝ Տոքթ. Վերժին Մատենեանի եւ Շիկին Արփի Զեսթենեանի, որոնք Ազգ Առաջնորդարան եկած եին Առաջնորդ Սրբազնը տեղեակ պահելու Յիմնադրամի անմիջական ծրագիրներուն:

Յարգելի հիւրերը Առաջնորդ Սրբազնին յայտնեցին, թէ Շաբաթ, 13 Նոյեմբերին, Կլենտեյլի մէջ տեղի պիտի ուսենայ մարդասիրական այս

կազմակերպութեան տարեկան քայլարշաւը, որ կը կրէ »Կեանքի Արշաւ« խորագիրը:

Առաջնորդ Սրբազնը բարձր գևահատեց Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամին մարդասիրական ու ազգանուեր ծառայութիւնները, վեր առնելով դժուար բուժելի հիւանդութիւններու դարմանումին ի խնդիր անոր ճիգերը: «Մեր ժողովուրդի օաւակները պետք է քաջատեղեակ ըլլան, որ Հիմնադրամի գանձանակին մեջ ծգուած իւրաքանչիւր լումայ, այս քայլարշաւին առնուած իւրաքանչիւր քայլ՝ յաւելեալ կաթիլ մը վառելանիւթ կը բերէ Հիմնադրամի ազգօգուտ գործին, հետեւաբար, կը քաջալերենք, որ մասնակցութիւնը ըլլայ իիտ շարքերով», ըսաւ Առաջնորդ Սրբազնը:

Յիշեցնենք, որ Տոք. Վ. Մատենեան մօտաւորապէս երկու շաբաթ առաջ ոսկրածուծի փոխ-պատուաստումի մասին դասախոսած էր Ազգ. Առաջնորդարանի սրահին մեջ, Տիկնանց Օժանդակ Մարմինին կազմակերպած ձեռնարկին, որ մաս կը կազմէր Հայ Կնոջ Տարուան նուիրուած ձեռնարկներուն շարքին:

PRELATE WELCOMES REPRESENTATIVES FROM THE ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY



On Tuesday, October 12th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the Armenian Bone Marrow Donor Registry (ABMDR) Dr. Vergine Madenlian and Mrs. Arpi Kestenian.

The guests informed the Prelate of the endeavors the organizations has planned for the remainder of the year, specifically the annual Walk of Life which will be taking place on Saturday, November 13th.

The Prelate commended the representatives and all the volunteers of the ABMDR for their humanitarian service, and calls on the community to participate in the walk-a-thon and contribute to the life-saving efforts of the organization.

**Ս. ԹԱՐԳԱՆՉԱՑ ՏՕՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ
Ս. ՔԱՌԱՍԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ**

**- ԶԱՅԱՆԱՅԻՑ ԴԱՍԱՐԱԾԻ ԵՐԿՈՒ ՈՒՐԱՐԱԿԻՐՆԵՐ
ՍՏԱՑԱՆ ՍԱՐԿԱՀԱԳԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՒ ՁԵՌԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ**



Կիրակի, 10
Հոկտեմբերին, Օրենց
Քառունթիի Ս. Քառասնից
Մանկանց Եկեղեցւոյ մէջ,
հանդիսաւորապէս
տօնախմբութեցաւ Սրբոց
Թարգանչաց յիշատակը
Եպիսկոպոսական Ս.
Պատարագով,
սարկաւագական
ձեռնադրութեամբ եւ Հայ
Գիրքի
Վաճառք-ցուցահանդեսով:
Ս. Պատարագ
մատուցեց Առաջնորդ
Առաջնորդ Առաջնորդ

Սրբազնը: Ս. Սեղանին սպասարկեցին Հոգը. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան
եւ Եկեղեցւոյ սարկաւագաց դասը: Պատարագի Երգեցողութիւնը կատարեց
Եկեղեցւոյ Դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ Տիար Արամ Աղապապեանի:

Հայ Եկեղեցւոյ Ձեռնադրութեան կարգին ու կանոնին համաձայն,
թեմիս քահանայից դասարանի Երկու նուիրեալ ուրարակիրները՝ Նազարեթ
Քիրազեան եւ Աւետիս Մարգարեան, յընթացս Ս. Պատարագին
արժանացան Սարկաւագական ձեռնադրութեան ու կարգին, ձեռամբ՝
Առաջնորդ Սրբազն Յօր: Խարտահլակն եր Հայր Սուրբը:

Ձեռնադրութեան ետք նորոգ ձեռնադրեալները իրենք շարունակեցին
Երգել Ս. Պատարագի սարկաւագական բաժինները:

Պատարագիչ Սրբազն Հայրը իր քարոզին սկիզբը նախ փառք եւ
գոհութիւն մատուցանեց ամենաբարին Աստուծոյ այդ օրուան իր պարգեւած
շնորհըներուն համար, նաեւ առողջութեան աղօթք բարձրացուց Եկեղեցւոյս
հոգեւոր հովիւ՝ Արժ. Տրանդ. Ալ. Ջին. Երեցեանի շուտափոյթ
ապաքինման համար, որ օր մը առաջ Ենթարկուած եր սրտի վիրաբուժական
յաջող գործողութեան մը: Սրբազնը նաեւ ժողովուրդին ներկայացուց Երկու
սարկաւագները եւ շնորհաւորեց անոնց կարգի ստացումը, մաղթելով
անոնց յարատեւ վերելք եւ քահանայից կարգի ստացում:

Ապա Սրբազն Հայրը անդրադարձաւ Թարգմանիչ Վարդապետաց
ինքնուրոյն Հայ ոիմազիծ կերտելու գործընթացին մասին: Ան որուատեց մեր
նախնեաց հաւատքն ու ոգին եւ Աստուծոյ ապաւինելու անոնց
վճռակամութիւնը, որուն իբրեւ արդիւնք՝ Աստուած, տեսիլիքի մը մէջէն
յայտնուելով Ս. Մեսրոպ Վարդապետին, իր մատով գծեց Հայոց ոսկեղնիկը՝
Հայոց տառերը: Ան ապա վեր առաջ թարգմանիչ սերունդին նուիրումն ու
դերը՝ մեր ինքնութեան պահպանումին մէջ:

Յաւարտ Ս. Պատարագին, Սրբազն Հայրը թափօրով եւ «Որք
Չարդարեցին» շարականի Երգեցողութեամբ առաջնորդութեցաւ Եկեղեցւոյ
կից Հայ Կեդրոնի սրահը, ուր, կազմակերպութեամբ «Արի Կիրակոս

Մինասեան» Ազգ. Վարժարանի տևորէնութեան եւ ծնողա-ուսուցչական մարմիններուն՝ Յայ Գիրքի նուիրուած վաճառք-ցուցահանդեսի բացումը կատարուեցաւ, ձեռամբ Առաջնորդ Սրբազնան Յօր:

Վարժարանի աշակերտները, միանալով եկեղեցւոյ երգչախումբին, երգեցին «Որք զարդարեցին» շարականը, ապա ժողովուրդին հրամցուցին Թարգմանչաց նուիրուած շարք մը արտասանութիւններ: Բարի գալստեան խօսք արտասանեց Վարժարանի գործադիր տևորէնուիհի՝ Տիկ. Գոհար Բալիկեան-Չահիր: Յուսկ բանքը արտասանեց Սրբազնան Յայրը, բարձր գևահատելով Վարժարանի գործադիր տևորէնուիհին, ծնողա-ուսուցչական մարմինը ու մանաւանդ աշակերտութիւնը՝ իրենց կատարած աշխատանքին ու ներկայացուցած գողտրիկ յայտագրին համար, ապա կոչ ուղղեց ներկաներուն՝ իրենց զաւակները վստահելու Յայ Վարժարանին, որպէսզի անոնք Թարգմանիչ Վարդապետներու ոգիով մեծնան, Յայ մշակոյթով դաստիարակուին ու հայերեն խօսին, այդպիսով՝ ծաղկո՞ւն պահելով հայ կրթական օճախները, յատկապես Օրէնք Զառութիի «Արի Կիրակոս Մինասեան» Ազգ. Վարժարանը, որ կը պատրաստուի իր հիմնադրութեան 25ամեակը տօնախմբել 2011 թուականին:

Աւարտին՝ ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» մաղթերգը եւ Ազգային Օրիներգը, որմէ ետք Սրբազնան Յօր «Պահպանիչ»ով ժողովուրդը մօտեցաւ ցուցադրուած գիրքերուն:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AT FORTY MARTYRS CHURCH ON THE OCCASION OF THE FEAST OF THE HOLY TRANSLATORS

- TWO PRIESTHOOD CANDIDATES ORDAINED AS DEACONS



On Sunday, October 10th, 2010, the Feast of the Holy Translators as well as Armenian Culture Month was celebrated with Episcopal Divine Liturgy, ordination of deacons, and the annual book fair at Forty Martyrs Church in Orange County.

Divine Liturgy was celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who was assisted at the altar by Very Rev. Fr. Barthev Gulumian.

During the service, the Prelate ordained stole-bearers and priesthood candidates Nazareth Kirazian and Avo Markarian as deacons.

Prior to his sermon, the Prelate first thanked Almighty God for all His blessings, and offered a prayer for the speedy recovery of parish pastor Rev. Fr. Hrant Yeretzian who a day before had undergone a heart operation. The Prelate also congratulated the two newly-ordained deacons, praying for the Lord to lead them on their path to priesthood.

In his sermon the Prelate exalted the invaluable contributions and legacy of the Holy Translators, who through their works brought about a new age for the Armenian people and enriched the Armenian nation.

At the conclusion of the service, the Prelate was led in a procession to Ghazarian Hall to conduct the opening of the book fair organized by the Pastor and Board of Trustees of Forty Martyrs Church, and the administration and parent-teacher committee of A.G. Minassian School.

Students of A.G. Minassian School joined the church choir in singing hymns and recited poetry dedicated to the Holy Translators. Welcoming remarks were delivered by Acting Principal Mrs. Kohar Zaher.

The Prelate commended Mrs. Zaher, the parent-teacher committee, and the students for the program they presented, and urged all those present to entrust the education of their children to Armenian Schools where they are raised with love for our language, culture and heritage.

The ceremony came to a close with the singing of the Cilician anthem and the Prelate's benediction.